

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ ԲՈՒԼՂԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ Ս. ՍԻՆՈԴԻ ԿՈՂՄԻՑ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՐՎԱԾ ՇԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(18-ը մայիսի 1975 թ., Սոֆիա)

Ձերդ Սրբություն,
Ձերդ բարձրապատվություններ,
Ձերդ գերապատվություններ,
Սիրելի սեղանակիցներ,

Մի քանի օր է, ինչ Մեր թանկագին և ցանկալի հյուրն է հնագույն հայ առաքելական եկեղեցու գահակալը՝ Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ի գլուխ հայ եկեղեցու հարգարժան պատվիրակության: Թույլ տվեք բուլղար օրթոդոքս եկեղեցու ս. Սինոդի, Մեր և ձեր անունից ողջունել նրանց «Բարի գալուստ»-ով:

Նորին Սրբությունն առաջին անգամ չէ, որ այցելում է Բուլղարիա, որպես բուլղարահայ թեմի նախկին առաջնորդ և որպես Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց: Նա քաջ ծանոթ է մեզ որպես քրիստոնեական տարբեր եկեղեցիների և համայնքների մերձեցման համար աշխատող միջազգային չափանիշով եկեղեցական հայտնի գործիչ, որպես աշխարհի խաղաղության ամրապնդման անխոնջ մշակ, նույնպես և մեծ հայրենասեր ու պաշտպան աշխարհում ցրված բոլոր հայերի հոգևոր միավորման, նրանց հայրենիքի՝ ներկա Սովետական Հայաստանի, ու նրանց միավորող հոգևոր կենտրոն սուրբ Էջմիածնի հովանավորության ներքո: Այս տեսակետից Նորին Սրբությունն ունեցավ անվիճելի ծառայություններ:

Մեծ գոհունակությամբ կարող ենք նշել, որ մինչայժմյան մեր բարեկամական հարաբերությունները, մասնավորապես վերջին ժամանակներում, վառ արտահայտությունն են մեր եկեղեցիների մերձեցման ու աշխարհի խաղաղության համար մեր թափած ջանքերի: Նկատի ունեմ այն այցելությունները, որոնք Մեր հավետ հիշատակելի նախորդը՝ Կիրիլ Սրբազան Պատ-

րիարքը, կատարեց դեպի Հայաստան, նույնպես և Մեր այցելությունն անցյալ տարի, ինչպես նաև Նորին Սրբություն Վազգեն Ա-ի մեզ տված այցելությունը 1965 թվականին ու Նրա ներկա այցելությունը:

Ներկա ժամանակը բազում խնդիրներ է առաջադրում էկումենիկ և խաղաղասիրական տեսակետներից: Մենք համոզված ենք, որ մեր փոխադարձ շփումները, աստվածաբանական երկխոսությունները և սերտ համագործակցությունը սույն հարցերի լուծման լավագույն և հուսալի եղանակներն են:

Ձերդ Սրբություն, ուզում եմ Ձեզ վստահեցնել, որ Ձեր այցելությունը մեծ ուրախություն պատճառեց Մեզ: Այն փոխադարձությունն է անցյալ տարվա Մեր այցելության, որն անմոռանալի պետք է մնա Մեզ համար: Մեր սույն փոխադարձ այցելությունները խոսուն արտահայտությունն են այն լավագույն հարաբերությունների, որոնք գոյություն ունեն մեր երկու եկեղեցիների՝ բուլղար օրթոդոքս և հայ առաքելական եկեղեցիների միջև: Դրանք սկիզբ են առել դեռևս հեռավոր անցյալից: Օսմանյան լծի տակ մեր ժողովուրդների անուրախ ճակատագիրն ավելի ևս միացրել է մեզ: Կարող ենք թվել բազմաթիվ պարագաներ, երբ անցյալ դարում հայ բարձրաստիճան հոգևորականներ ոչ միայն անկեղծորեն կարեկցել են մեզ, այլև իրենց կյանքը վտանգելու գնով աջակցել բուլղար ժողովրդի արդար դատի, ինքնուրույն եկեղեցու և ազգային ազատության ու անկախության համար նրա մղած պայքարին:

Ներկայումս Բուլղարիայում ապրում են ավելի քան 20.000 հայեր: Պետք է գոհունակությամբ նշել, որ նրանք մեր Ժողովրդական Հանրապետության օրինակելի քաղաքացիներն են: Հայտնի են իրենց գովելի աշխատասիրությամբ և պարկեշտությամբ, ապրում են մեր ժողովրդի ուրախություններով: Նրանք իրենց օտար չեն զգում մեզ մոտ: Հայերը ևս, բուլղարների հետ միասին, իրենց կարևոր նպաստն են բերում մեր երկրի բարեկեցության և կառուցման գործին՝ մեր ժողովրդական կառավարության հոգածության և ղեկավարության ներքո:

Պետք է նշել նույնպես, որ Ձերդ Սրբության, ինչպես նաև Ձեր ներկայացուցիչ, բուլղարահայերի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսի ջանքերով մեր երկու եկեղեցիների և հայ ու բուլղար ժողովուրդների, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության և Սովետական Միության միջև փոխհարաբերությունները տարեցտարի դառնում են ավելի սերտ, ավելի արտագին և արդյունավոր: Ահա ինչ որ Մեզ բացառիկ ուրախություն է պատճառում:

Ողջունելով Ձերդ Սրբությանն ու Ձեզ ընկերակցող անձանց «Բարի եկաք»-ով, բարի կամքով և ուրախ սրտով, բաժակ եմ բարձրացնում Ձեր անձնական քաջառողջության համար, միջեկեղեցական ու խաղաղասիրական Ձեր գործունեության հաջողության համար, Ձեր բոլոր գործակիցների քաջառողջության համար, հերոսական, աշխատասեր և խաղաղասեր հայ ժողովրդի, ինչպես նաև սովետական բոլոր ժողովուրդների կյանքի համակողմանի բարեհաջողության համար:

Ձերդ Սրբության կենացը: